Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
սեպտեմբերի 4-ի N 947 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԵՎ ՆՐԱ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի, մշտադիտարկումների միասնական էլեկտրոնային շտեմարանի ստեղծման, տեղեկատվության հավաքագրման, գրանցման, ամփոփման և տրամադրման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի մշտադիտարկումների միասնական էլեկտրոնային շտեմարանի (այսուհետ՝ շտեմարան) ստեղծման նպատակը Սևանա լճին վերաբերող մշտադիտարկումների տվյալների հավաքագրման, գրանցման, ամփոփման և տրամադրման միասնականության ապահովումն է, տվյալների միասնական հենքի ստեղծումը:

3. Շտեմարանի ամբողջությունն ու անվտանգությունն ապահովվում են օգտագործողների հասանելիության սահմանափակման (օգտագործողի անվան, գաղտնաբառի և (կամ) էլեկտրոնային հավաստագրի միջոցով) և տվյալների փոփոխման պատմության պահպանման միջոցով: Պարբերաբար (շաբաթական, ամսական, տարեկան) պահպանվում են շտեմարանում առկա պահուստային տվյալները:

4. Շտեմարանի տեխնիկական սպասարկումն իրականացնում ու անվտանգությունն ապահովում է «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (համաձայնությամբ) (այսուհետ՝ ինստիտուտ):

II. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Մշտադիտարկման ենթակա ցուցանիշների ցանկը կազմվում է Եվրոպական միության Ջրային շրջանակային դիրեկտիվով (ՋՇԴ) (2000/60/EC) ընդունված մակերևութային ջրերի ընդհանուր ցուցանիշների, առաջնային և երկրորդական աղտոտիչների ու ստանդարտների ցանկին համապատասխան՝ այն տեղայնացնելով՝ հաշվի առնելով Սևանա լճի առանձնահատկությունները: Շտեմարանում գրանցվող տվյալները տրամադրում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված՝ Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում մշտադիտարկումներ կատարող «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը (այսուհետ՝ կազմակերպություններ): Մշտադիտարկումների կատարման ժամանակ մշտադիտարկումների կետերի ընտրման մեթոդաբանությունը պետք է համապատասխանի Եվրոպական միության Ջրի շրջանակային դիրեկտիվով (ՋՇԴ) ընդունված մեթոդաբանությանը: Մշտադիտարկումների կատարման ընթացքում նմուշառման և նմուշներում ցուցանիշների չափման մեթոդաբանությունը պետք է համապա-

տասխանի Եվրոպական միության Ջրի շրջանակային դիրեկտիվով (ՋՇԴ) ընդունված չափումների ու անալիզների կատարման մեթոդաբանությանը:

6. Շտեմարանում գրանցվող Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի մշտադիտարկման տվյալները պետք է բովանդակեն դիտարկվող ցուցանիշների՝

1) անվանումները.

2) չափի միավորները.

3) մեծության հնարավոր սահմանները.

4) չափման ճշտությունը.

5) չափման վայրը և (կամ) աշխարհագրական կոորդինատները.

6) չափման ամսաթիվը և ժամանակը:

7. Մշտադիտարկումները կատարելու և ստացված արդյունքները ներկայացնելու հաճախականությունն ու պարբերականությունը սահմանվում են մշտադիտարկումներ կատարող կազմակերպությունների կողմից սահմանված կարգով:

8. Տվյալները շտեմարանում գրանցվում են դիտարկումների կատարումից և ստացված արդյունքների մշակումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

9. Գրանցված և հաստատված տվյալները կարող են փոփոխության ենթարկվել միայն դրանք տրամադրած կազմակերպության կողմից, եթե՝

1) ճշգրտվել են հերթական մշտադիտարկման արդյունքում.

2) գրանցված և հաստատված տվյալներում տեղ են գտել մեխանիկական սխալներ:

III. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Մշտադիտարկումներ կատարող կազմակերպությունները սույն կարգի 6-րդ կետով նախատեսված ցուցանիշները գրանցում են շտեմարանի համապատասխան մասում:

IV. ԳՐԱՆՑՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Գրանցված տվյալներն ամփոփվում են մշտադիտարկումներ կատարող կազմակերպությունների կողմից հաստատված կարգերի համաձայն:

V. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Շտեմարանում գրանցված մշտադիտարկումների տվյալները տրամադրվում են Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում մշտադիտարկումներ կատարող կազմակերպություններին, պետական կառավարման մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

13. Նախագծահետախուզական, գիտահետազոտական հաստատություններին, հասարակական կազմակերպություններին, իրավաբանական ու ֆիզիկական անձանց և այլ հայտատուներին տեղեկատվությունը տրամադրվում է տվյալների ամփոփ հենքից:

14. Շտեմարանի տվյալները Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում մշտադիտարկումներ կատարող կազմակերպություններին տրամադրվում են տեքստային, թվային, գրաֆիկական տվյալներով, դրանցից կատարված քաղվածքներով, հատկանշական աղյուսակներով՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով:

15. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունները տրամադրվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ